



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

ԱՌԱՐԿԱ

ՀԵՂԻՆԱԿ

ՄԱՐԶ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Օդային տազնապ

ՆՁՊ

Անդրեաս Դանիելյան

Երևան

Հ. 167 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<u>Ներածություն</u>	3
<u>1. «Օդային տազնապ» ազդանշան</u>	5
<u>2. Բնակչության գործողությունը «Օդային տազնապ» և «Օդային տազնապի ավարտ» ազդանշանների ազդարարման դեպքում</u>	7
<u>3. Բնակչության պատասպարումը քաղաքային պայմաններում</u>	10
<u>Եզրակացություն</u>	14
<u>Օգտագործված գրականության ցանկ</u>	15

Ներածություն

Թեմայի արդիականություն: Քաղաքացիական պաշտպանությունը (այսուհետ՝ ՔՊ) մեր երկրի համապետական պաշտպանական միջոցառումների կարևոր ու բաղկացուցիչ մասն է:

ՔՊ մասին հասկացությունը տրված է «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, ըստ որի դա նախապատրաստական և հիմնական միջոցառումների համակարգ է ուղղված բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը կամ պաշտպանության նախապատրաստմանը Հայաստանի վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության, կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու դեպքում:

Սա նշանակում է, որ ՔՊ համակարգը պետք է պաշտպանի ոչ միայն բնակչությանը, նյութական արժեքները, այլ նաև ապահովի տնտեսության որոշ ճյուղերի կայուն աշխատանքը և առաջին հերթին բնակչության կենսաապահովման օբյեկտների կայուն գործունեությունը:

Գիտության զարգացումը և դրա արգասիքների ներդրումը ռազմական տեխնիկայի ու տեխնոլոգիաների մեջ հանգեցրեց «ճակատ-թիկունք» հարաբերակցության, հաղորդելով նոր իմաստ: Խոցման ժամանակակից միջոցները ձեռք են բերել նոր որակներ (խոցման դիպուկություն, ուժգնություն) և հատկություններ (հեռավորություն, բարձրություն, արագություն, աննկատություն), որոնք թույլ են տալիս վարել հեռահար պատերազմական գործողություններ:

20-րդ դարի հիմնական պատերազմների վիճակագրությունը ցույց տվեց, որ ժամանակակից պատերազմներում, ռազմական կոնֆլիկտներում և տեղային բախումներում ավելի շատ խաղաղ բնակիչ է խոցվում, քան զինծառայողներ:

Ազդարարման ազդանշանները նախատեսված են տվյալ բնակավայրում (տարածքում) արտակարգ իրավիճակի առաջացման կամ դրա սպառնալիքի, հակառակորդի կողմից զինված հարձակման և դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին, արտակարգ իրավիճակների հանձնաժողովներին, տարահանման հանձնաժողովներին, քաղաքացիական պաշտպանության ծառայություններին,

շտաբներին, կազմավորումներին, ինչպես նաև փրկարար ուժերին ու բնակչությանն ազդարարելու համար:

Ազդարարման ազդանշանների տեսակներն են՝

- 1) «Օդային տազնապ».
- 2) «Ուշադրություն բոլորին»:

Ազդարարման ազդանշանները տրվում են կապի և ազդարարման բոլոր միջոցներով՝ էլեկտրաշչակների և բարձրախոսային (ստացիոնար և շարժական) սարքերով, հեռուստատեսությամբ, ռադիոհեռարձակմամբ, հեռախոսակապով և համացանցային կապով:

Թեմայի նպատակը: Թեմայի նպատակն է ուսումնասիրել «Օդային տազնապ» ազդանշանը և այդ ազդանշանի դեպքում քաղաքային պայմաններում պատասպարման առանձնահատկությունները:

Ուսումնասիրության խնդիրները:

1. Ներկայացնել «Օդային տազնապ» ազդանշանի տրման առանձնահատկությունները
2. Վերլուծել պատասպարման առանձնահատկությունները «Օդային տազնապ» ազդանշանի դեպքում:

1. «Օդային տազնապ» ազդանշան

«Օդային տազնապ» ազդանշանը տրվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով, շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ՝ միացվում են էլեկտրաշչակները և տրվում է տատանվող երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան:

Բնակչության ազդարարելու մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա:

Բնակչության ազդարարումն իրականացվում է՝

1) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից.

2) հակառակորդի հարձակման հետևանքով, որպես երկրորդային խոցման օջախ, հավանական վտանգավոր, հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտներում արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ կազմակերպության ղեկավարի կողմից, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության միջոցով.

«Օդային տազնապ» ազդանշանի դեպքում անհապաղ իրականացվում է հետևյալ միջոցառումները՝

1) լրիվ կամ մասնակի լուսաքողարկում, մշտական էլեկտրասնուցման անհրաժեշտություն ունեցող կազմակերպությունների էլեկտրամատակարարման ապահովմամբ.

2) բնակչության պատսպարում կցագրված (կամ մոտակա) պաշտպանական կառույցներում.

3) քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի պահեստային կառավարման կետեր տեղափոխում:

Չնարավորության դեպքում իրականացվում են անհատական պաշտպանության միջոցների, ճառագայթային և քիմիական հետախուզության սարքերի տեղափոխում պաշտպանական կառույցներ: ¹

Կազմակերպություններում արտադրությունների անվթար կանգնեցումը կատարվում է համաձայն նախապես մշակված գրաֆիկի: Անընդհատ տեխնոլոգիական պրոցեսներ ունեցող կազմակերպությունները, որտեղ անհնարին է արտադրական պրոցեսի անվթար կանգնեցումը, աշխատող հերթափոխի աշխատակիցների պատսպարման նպատակով՝ պետք է ստեղծված լինեն առանձին թաքստոցներ անմիջապես աշխատատեղերի մոտ:

¹²Մաթևոսյան Հ. Ծ. Քաղաքացիական պաշտպանության հիմունքներ: /Համառոտ գծապատկերային ձեռնարկ/ ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ, 2015 1 32 էջ

2. Բնակչության գործողությունը «Օդային տազնապ» և «Օդային տազնապի ավարտ» ազդանշանների ազդարարման դեպքում

Լսելով ազդանշանը անմիջական սպառնալիքի վերաբերյալ՝ անհրաժեշտ է գործել արագ և գործնական, առանց խուճապի: Հարկավոր է նախօրոք գիտենալ բնակավայրի, աշխատավայրի հարևանությամբ տեղաբաշխված պաշտպանական կառույցները, ինչպես նաև տիրապետել վարքագծի կանոններին նմանատիպ իրավիճակներում:

«Օդային տազնապ» ազդանշանի դեպքում բնակչությունը պարտավոր է՝

ա) աշխատավայրում գտնվելու դեպքում.

1. գործել տվյալ ձեռնարկության ՔՊ պլանով նախատեսված հրահանգի պահանջներին համապատասխան, անջատել ներքին և արտաքին լուսավորությունը (գիշերային ժամերին)՝ բացառությամբ քողարկված լուսավորության լուսարձակների, ՔՊ անհատական պաշտպանական միջոցները բերել պատրաստի վիճակի, հնարավորինս արագ տեղափոխվել պաշտպանական կառույց,

2. տրանսպորտային միջոցների վարորդները պարտավոր են անմիջապես կայանել, բացել դռները, հանգցնել շարժիչը, անջատել էլեկտրականությունը և ուղևորների հետ պատսպարվել մոտակա պաշտպանական կառույցում (մետրոպոլիտենի կայարան, գետ- նանցում), հարմարվել տեղանքի ռելիեֆին, օգտագործել ցածր աղյուսե կամ քարե ցանկապատերը, ջրատարները, կոճղերը, թմբերը և այլն: Անհրաժեշտ է հիշել, որ շենքերի, շինությունների պատերի տակ պատսպարվել չի կարելի. դրանք կարող են փլվել²:

բ) Հասարակական վայրում գտնվելիս՝

1. ուշադրությամբ լսել կառավարիչի հաղորդումը մոտակա պաշտպանական կառույցի տեղաբաշխման վայրի մասին և կազմակերպված տեղափոխվել այնտեղ,
2. ձեռքի տակ եղած անհատական պաշտպանական միջոցները բերել պատրաստի վիճակի,
3. հրահանգի բացակայության դեպքում օգտվել մակերևութապատկերի հնարավորությունից, բնական և արհեստական թաքստոցներից:

² Մանուկյան Ս., Ճաղարյան ԳԱրտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր: Ուսումնական ձեռնարկ Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 98

գ) Բնակարանում գտնվելու դեպքում՝

1. անջատել գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման համակարգերը, վերցնել ՔՊ անհատական պաշտպանական միջոցներ, աղետի ճամպրուկ (3 օրվա սնունդ, ջրի պաշար, առաջին անհրաժեշտության իրեր, հիգիենայի պարագաներ, դեղամիջոցներ, անձը հաստատող փաստաթուղթ),

2. զգուշացնել հարևաններին ազդարարման մասին,

3. հնարավորինս արագ տեղափոխվել մոտակա պաշտպանական կառույց³:

«Օդային տագնապի ավարտ» ազդարարման ազդանշանը տրվում է բնակչությանը իրազեկելու թշնամու կողմից օդային հարձակման վտանգի վերացման մասին: Այս ազդանշանի ազդարարումից հետո բնակչությունը գործում է ըստ ստեղծված իրավիճակի.

1. ծառայողները, ուսանողները, բանվորները վերադառնում են աշխատավայրեր կամ ընդգրկվում են վթարավերականգնողական աշխատանքների կատարմանը,

2. չաշխատող բնակչությունը վերադառնում է իրենց բնակարաններ և հետևում ըստ իրավիճակի տրվող հրահանգներին, այդ թվում՝ հնարավոր ռեժիմային միջոցառումներից բխող հրահանգներին, բնակչությունը պետք է գտնվի զգուշացված թշնամու հնարավոր նոր հարձակմանը դիմակայելու համար (40):

«Օդային տագնապի ավարտ» ազդանշանը տրվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով, շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ՝ միացվում են էլեկտրաշջակները և տրվում է անընդհատ երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան:

«Օդային տագնապի ավարտ» ազդանշանի դեպքում իրականացվում է հետևյալ միջոցառումները՝

1) ստուգվում և վերականգնում է կառավարման, կապի և ազդարարման համակարգերը.

2) իրականացվում է հետախուզություն՝ հիմնական ուշադրություն դարձնելով առավել մարդաշատ, ինչպես նաև պաշտպանական կառույցների և բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպությունների տեղակայման վայրերին: Կազմակերպվում է դոզաչափական հսկողություն.

³ Մանուկյան Ս., Ճաղարյան ԳԱրտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր: Ուսումնական ձեռնարկ Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 98

3) խոցման երկրորդական գործոնների ակտիվացման դեպքում կատարվում է իրավիճակի գնահատում, և իրականացվում են միջոցառումներ դրանցից բնակչության պաշտպանության կազմակերպման ուղղությամբ.

4) արագացված շարունակվում են իրականացվել մինչև „Օդային տազնապ,, ազդանշանը իրականացված քաղաքացիական պաշտպանության միջոցառումները(տարահանում, անհատական պաշտպանության միջոցներով ապահովում, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների այլ ապահովումներ).

5) ՔՊ ծառայությունների, կազմակերպությունների կողմից ճշգրտվում և պատրաստականության են բերվում պահպանված համապատասխան քաղաքացիական պաշտպանության կազմավորումները, ճշգրտվում են ուժերի խմբավորումների հաշվարկները.

6) կազմակերպվում և անցկացվում են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.

7) կազմակերպվում և անցկացվում է տուժածների բժշկական օգնություն.

8) կազմակերպվում է քանդված և վնասված պաշտպանական կառույցների վերականգնման և չբավարարող պաշտպանական կառույցների շինարարություն:

3. Բնակչության պատասպարումը քաղաքային պայմաններում

Բնակչության պատասպարումն իրականացվում է վերգետնյա, ստորգետնյա հատուկ շինություններում (ապաստարաններ, հակաճառագայթային թաքստոցներ, ապաստարանաճեղքեր) և բնակելի ֆոնդի տարածքներում⁴: Բնակչության պատասպարումն իրականացվում է բնակչությանը պաշտպանության մասին տեղեկացման համապատասխան ազդանշաններով: Պատասպարման ժամանակամիջոցը որոշում է ՀՀ կառավարության լիազորած մարմինը:

ՔՊ պաշտպանական կառույցները ինժեներատեխնիկական բարդ կառույցներ են, որոնք նախատեսված են պաշտպանելու բնակչությանը զանգվածային ոչնչացման զենքերից, ինչպես նաև բնաջնջման սովորական միջոցների կիրառման կամ տեխնաժին հնարավոր վթարների հետևանքով առաջացած խոցող գործոններ- ռից: Ըստ պաշտպանական հատկանիշների՝ ՔՊ պաշտպանական կառույցները բաժանվում են երեք հիմնական խմբի՝

1. ապաստարաններ.
2. հակաճառագայթային թաքստոցներ.
3. ապաստարանաճեղքեր (խրամատներ)⁵:

Ապաստարաններ

Ապաստարանները կառուցվում են որպես առանձին շինություն կամ տեղակայվում են շենքերի նկուղային հարկերում: Բաղկացած են հիմնական և օժանդակ կառույցներից⁶: Հիմնական կառույցները նախատեսված են մարդկանց անմիջական պատասպարման, իսկ օժանդակ կառույցները՝ կենսական պայմաններն ապահովելու համար: Օժանդակ կառույցների բաղկացուցիչ մասերից են նախա- մուտքերը, վթարային ելքերը, սննդամթերքի պահեստանոցը, ֆիլտրաօդափոխիչ համակարգի խցիկը, ջեռուցման և սանիտարական հանգույցները, դիզելային մարտկոցների և արտեզյան հորանցքի համար նախատեսված շինությունները, կառավարման կետը և այլն: Ապաստարաններում տեղակայված են նաև պաշտպանական անհատական,

⁴ ՀՀ օրենքը «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» 1998 թվական, փետրվարի 12:

⁵ Մանուկյան Ս., Ճաղարյան ԳԱրտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր: Ուսումնական ձեռնարկ Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 79

⁶ Մանուկյան Ս., Ճաղարյան ԳԱրտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր: Ուսումնական ձեռնարկ Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 80

հետախուզական, հրդեհաշիջման, վթարավերականգնողական, լուսավորման միջոցներ, վառելիքաէներգետիկ պաշարներ և այլն: Ապաստարանի օդամատակարարումը կատարվում է մաքուր օդափոխանակության (դրսի օդը գտիչի միջոցով գտվում է ռադիոակտիվ փոշուց, թունավոր նյութերից և բակտերիալ միջոցներից) կամ լրիվ մեկուսացման ռեժիմով (ներսի օդը վերականգնվում է ապաստարանում առկա թթվածնի պաշարների հաշվին): Լրիվ մեկուսացման ռեժիմը կիրառվում է, երբ հնարավոր չէ օգտագործել դրսի խիստ աղտոտված օդը, որի մեջ զանգվածային հրդեհների հետևանքով նվազում է թթվածնի պարունակությունը և կտրուկ ավելանում ածխաթթու գազի քանակությունը: Հնարավոր միջուկային պայթյունի դեպքում, որպես կանոն, ֆիլտրաօդափոխանակությունը անջատվում է 30 – 40 րոպեով (լիակատար մեկուսացման ռեժիմ):

Ապաստարաններն ապահովում են լիարժեք մեկուսացումն արտաքին աշխարհից և ամենահուսալի են, պաշտպանում են մարդկանց զանգվածային ոչնչացման զենքի խոցող բոլոր գործոններից⁷: Ըստ տարողության լինում են Փոքր՝ 200-ից 500, մի- ջին՝ 500-ից 2000, և խոշոր՝ 2000 և ավելի մարդկանց համար նախատեսված: Ապաստարանի զետեղարանի բարձրությունը պետք է լինի առնվազն 2.2 մ⁸: Մեկ մարդու համար նախատեսվում է 0.5 մ² տարածություն և 1.5 մ³ ծավալ, թեթև լվացվելու և խմելու համար 3.5- 4 լ ջուր, 12-16 լ տեխնիկական ջուր: Ապաստարանի գործընթացները կանոնակարգում է պարետը՝ յոթ անձից բաղկացած օղակով:

Հակաճառագայթային թաքստոցներ

Որպես այդպիսին կարող են ծառայել մետրոպոլիտենի կայարանները, խորացված շինությունները, բանջարանոցի պահեստները, ստորգետնյա անցումները, ինչպես նաև քարաշեն տների առաջին հարկերը: Նրանք կարող են պաշտպանել մարդկանց լուսային և ռադիոակտիվ ճառագայթներից, ներթափանցող ռադիացիայից, մասամբ բակտերիալ մանրէների և թունավոր նյութերի անմիջական ազդեցությունից, իսկ հատուկ կառուցվածքները՝ նաև հարվածային ալիքից: Հակաճառագայթային թաքստոցի պաշտպանական հատկությունները որոշվում են ռադիացիայի չափաբաժինների թուլացման գործակիցով: Ռադիացիայի թուլացման գործակիցը

⁷ ՀՀ կառավարության որոշում՝ Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին 2006 թ. օգոստոս):

⁸ Ս. Ա. Հարությունյան, ԱԻ և ԲՊ հիմնահարցեր, ուսումնական ձեռնարկ, Երևան – 2003, «Տնտեսագետ» հրատարակություն

կախված է շինության հիմքի և պատերի հաստությունից և խտությունից: Չայտնի է, որ 1 մ բնահողի շերտը 200 անգամ նվազեցնում է ռադիացիայի մակարդակը: Մասնակի վերակառուցման միջոցով հնարավոր է զգալի բարձրացնել թաքստոցի պաշտպանական հատկանիշները. վերգետնյա հատվածները ծածկել բնահողով, ավազա- պարկերով, մեծացնել մեկուսացումը, տեղակայել ֆիլտրաօդափո- խիչ համակարգ և այլն: Օրինակ՝ քարաշեն մեկ հարկանի տան ներքնահարկի ռադիացիայի թուլացման գործակիցը հասնում է 20– 30-ի, իսկ եթե հատակի վրա փռվի բնահող, լուսամուտները ծածկվեն, հող կփտվի վերգետնյա պատերի, լուսամուտների վրա, ապա թուլացման գործակիցը կմոտենա 300-ի⁹:

Ապաստարանաճեղքեր

Ապաստարանաճեղքերը կամ խրամատները լինում են բաց՝ առանց տանիքի, և փակ՝ տանիքով: Պաշտպանության պասիվ միջոցներ են, կիրառելի են թույլ ազդեցության գոտիներում և այն դեպքերում, երբ ապաստարանները և հակաճառագայթային թաքստոցները չեն բավարարում բնակչության պատասպարման համար: Բաց ապաստարանաճեղքը 10 անգամ թուլացնում է ներթափանցող ռադիացիան, իսկ հարվածային ալիքից, լուսային ճառագայթից ազդեցությունը նվազեցնում են 1.5-2 անգամ: Փակ ապաստարանաճեղքը լուսային ճառագայթումից կպաշտպանի լիովին, իսկ ներթափանցող ռադիացիայի ազդեցության չափաբաժինը կնվազի մոտ 40 անգամ: Բացի վերոգրյալից՝ Փակ ապաստարանաճեղքերը կպաշտպանեն մարդկանց մաշկը, հագուստը ախտածին նյութերի անմիջական ազդեցությունից, ինչպես նաև փլուզվող շինությունների բե- կորներից:

Բնակչության գործողությունները և վարքի կանոնները ՔՊ պաշտպանական կառույցներում պատասպարվելիս

ՔՊ պաշտպանական կառույցներում պատասպարվողները պարտավոր են՝

1. իրենց հետ ունենալ պոլիէթիլենային պարկի մեջ փաթեթավորված երեք օրվա սննդամթերք (ցանկալի է պահածոյացված) և խմելու ջուր, առաջին անհրաժեշտության իրեր, անձը հաստատող փաստաթղթեր, անհատական պաշտպանական միջոցներ (35),

⁹ Մանուկյան Ս., Ճաղարյան ԳԱրտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր: Ուսումնական ձեռնարկ Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 82

2. պատրաստ լինել կրելու պաշտպանական կառույցում գտնվելու դժվարությունները,
3. անհատական պաշտպանական միջոցները պահել պատրաստի վիճակում՝ անհապաղ օգտագործման համար,
4. հսկողության տակ վերցնել երեխաների կողմից ՔՊ անհատական պաշտպանական միջոցների օգտագործումը,
5. ակտիվորեն մասնակցել ՔՊ կառույցի հնարավոր վնասվածքների վերացման աշխատանքներին,
6. ցուցաբերել առաջին հնարավոր օգնություն տուժածներին,
7. պաշտպանական կառույցից դուրս գալ միայն ղեկավարի ցուցումով:

Արգելվում է՝

1. պաշտպանական կառույց բերել դյուրավառ և սուր հոտ արձակող նյութեր, խոշոր իրեր, տնային կենդանիներ,
2. կատարել գործողություն, որը կարող է խուճապ առաջացնել,
3. աղմկել, ծխել, վառել նավթե լամպ կամ մոմ, ինքնաշեն կանթեղ,
4. քայլել տարածքում առանց խիստ անհրաժշտության,
5. սննդի մնացորդները նետել չնախատեսված վայրում և այլն ¹⁰:

¹⁰ Մանուկյան Ս., Ճադարյան ԳԱրտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր: Ուսումնական ձեռնարկ Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 83

Եզրակացություն

«Օդային տազնապ» ազդանշանը տրվում է՝ Հայաստանի Հանրապետության վրա օդային հարձակման դեպքում.

«Օդային տազնապ» ազդանշանի դեպքում Էլեկտրաշահակների միջոցով տրվում է ընդհատվող (տատանվող) ձայնային ազդանշան (2-3 րոպե տևողությամբ), միաժամանակ բարձրախոսներով տրվում է «Օդային տազնապ: Պատասպարվել պաշտպանական կառույցներում» բովանդակությամբ համապատասխան տեքստային հաղորդագրություն:

«Օդային տազնապ» ազդանշանի դեպքում՝

1) պետական կառավարման հանրապետական մարմիններն ու կազմակերպությունները պետք է կազմակերպեն ենթակա մարմնի և նրա ստորաբաժանումների անձնակազմի, իսկ պետական կառավարման տարածքային մարմիններն ու տեղական ինքնակառավարման մարմինները՝ համապատասխան մարզի և համայնքի բնակչության պատասպարումը պաշտպանական կառույցներում.

2) բնակչությունը պետք է պատասպարվի պաշտպանական կառույցներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» 1998 թվական, փետրվարի 12:
2. ՀՀ կառավարության որոշում՝ ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին 2006 թ. օգոստոս):
3. Հարությունյան Ս. Ա., ԱԻ և ՔՊ հիմնահարցեր, Ուսումնական ձեռնարկ, Երևան – 2003, «Տնտեսագետ» հրատարակություն
4. Մաթևոսյան Հ. Շ. Քաղաքացիական պաշտպանության հիմունքներ: /Համառոտ գծապատկերային ձեռնարկ/ ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ, 2015 1 32
5. Մանուկյան Ս., Ճաղարյան Գ., Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր: Ուսումնական ձեռնարկ Եր.: ԵՊՀ հրատ., 2017